ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«24» հոկտեմբերի 2017 թվականի № 132-Ա

ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 28-րդ հոդվածով, 29-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով <ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ> ՓԲ ընկերության ՀՀ Արարատի մարզի Շենի ավազի հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքի գրավադրման մասին (ՇԱԹՎ 29/166) <ԷՖՖԵԿՏ ԳՐՈՒՊ> ՓԲ ընկերությանը 2017թ-ի հուլիսի 24-ի թիվ 01-03 դիմումը՝ հրապարակային սակարկություններին մասնակցելու մասին, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության 2017թ. օգոստոսի 14-ի համաձայնությունը, 2017 օգոստոսի 18-ին կայացած աճուրդի արձանագրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ընդունել ի գիտություն, որ <ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ> ՓԲ ընկերությանը պատկանող ընդերքօգտագործման /ՇԱԹՎ-29/166, ՊՎ-166, ԼՎ-166/ իրավունքը հրապարակային սակարկության միջոցով օտարվել է <ԷՖՖԵԿՏ ԳՐՈՒՊ> ՓԲ ընկերությանը:

2. Աշխատակազմի Ընդերքի գործակալության պետին՝

1) Հաշվի առնելով սույն հրամանի 1-ին կետը, դադարեցնել <ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ> ՓԲ ընկերության <<ՀՀ Արարատի մարզի Շենի ավազի հանքավայրի նկատմամբ ունեցած ընդերքօգտագործման իրավունքը>:

2) <<ՀՀ Արարատի մարզի Շենի ավազի հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը /ՇԱԹՎ-29/166, ՊՎ-166, ԼՎ-166/ տրամադրել <ԷՖՖԵԿՏ ԳՐՈՒՊ> ՓԲ ընկերությանը՝ կատարելով համապատասխան փոփոխություններ նշված ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում,

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, օգտակար հանածոների արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

5.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ